


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 3 ՄԶՃ.
Գաւառացի 10 ՄԶՃ.
Վերանայ Կ. Պոլսոյ 4 ՄԶՃ.
Գաւառացի 3 ՄԶՃ.
Մանուկներու տուր մէկ տնոց տան հա-
մար 3 դուրուշ, երկու տնոց տան հա-
մար 2 դուրուշ, աւելի տնոց տան հա-
մար գաւառացի տնոց տան կը-
լայ :



ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍԱՀԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆՔ 14 ՄԱՐՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Սպարապետ Բէուֆֆիաշան վա-
ւերացեալ դաշնադրութիւնը թե-
րապուրկէն բերելով կիրակի օրը մայ-
րաքաղաքս վերադարձաւ Օտէսայի
Ռուսական շոգենաւով, ընկերակցու-
թեամբ Ղազի Օսման և Եւրի քանի
մը փաշաներու, որք պատերազմա-
կան գերի ինկած էին : Առ այժմ
Ռուսիոյ և Թուրքիոյ մէջ ամեն բան
վերջացած և հաշտութիւնը կտառ-
եալ է : Կը մնայ գործը տէրութեանց
խորհրդին, որուն երբ գումարելը
գեռ անստուգ է : Անգղիոյ երեսփո-
խանաց մարտ 14 ի նստին մէջ վիճա-
բանութիւն մ'եղաւ տէրութեանց
խորհրդին վրայ : Սըր Բոպերթ Բիլ
գիտել տուաւ թէ հաշտութիւնը կըն-
քուած է, սակայն այս հաշտութիւնը
պատերազմի սկիզբ մ'է : Անգղիա կը
պատրաստուի, և իւր Մանչի նաւա-
տորմը Միջերկրականի նաւատորմին
հետ կը միանայ : Աւստրո-Հունգա-
րիա յոտից ցլուլու կը զինուորի : Յու-
նաստան կը պատերազմի : Քանզի թէ
և Հելլենական զօրքն Օսմանեան սահ-
մանէն ետ քաշուեցաւ, բայց հելլենա-
ցի ապստամբք թեսաղիոյ և էպիրոսի
կողմերն յարձակած են : Եպիրոսի
ապստամբները գրեթէ ընտելնջե-
ղան, և Անգղիական Ռաբիտ շոգե-
նաւը ծովերէրքէն բաւական կանայք
և մանկտիք ազատելով փորձու հա-
նեց : Բայց թեսաղիոյ մէջ ապստամբք
զօրաւոր են : Սըր Բոպերթ Բիլ հաշ-
տութեան պայմանաց վրայ խօսելով
նախարարաց աշխարհավարութիւնը
մեղադրեց, որք երբ այս մասին ի-
րենց հաղցում մ'ըլլայ, կը պատա-
խանեն թէ « տախալին բան մը չեն
գիտեր » : Նոյն երեսփոխանն ըսաւ նաեւ
թէ տէրութեանց խորհրդին վրայ
վստահութիւն չկրնար յայտնել, որով
հետեւ երկից կայսերաց դաշնակցու-
թեան գլխաւոր պաշտպան Պիտմարք
իշխանին նախադատութեան ներքեւ
պիտի գումարի : Փարիզի դեսպան
Լորտ Լայքնսի տէրութեանց խորհրդ-
դոյն մէջ Անգղիոյ ներկայացուցիչ
կարգուիլը Սըր Բոպերթ Բիլի պար-
սաւանաց ենթակայ եղաւ, որ կը
պնդէր թէ Լորտ Լայքնս Սըր Հէնրի
Էլիօթի կամ Պ. Լէյքըրտի համակար-
ծիք չէ, այլ Լորտ Սալիզբըրիի կար-
ծիքն է, որուն հետեւանքը ցաւալի
եղաւ : Ատենաբանը Լորտ Տէրպիի
անձամբ Պէրլին երթալն աւելի յար-
մար դատեց : Իսկ Լորտ Մոնթաղի-
ն Լորտ Տէրպիի աշխարհավարութիւնը
խմբեց, և ըսաւ թէ աւելի լաւ է
Շուվալաֆ կոմսն անուանել Անգղիոյ
ներկայացուցիչ, քանզի գոնէ այն
ատեն Լոնտոնյէն հեռանալով ո'չ ևս

Լորտ Տէրպիի վրայ ազդեցութիւն կը
բանեցնէ : Տէրութեանց խորհրդոյն
մէջ վիճարանութեան ազատութիւնն
անկարելի է, ըսաւ, քանի որ Ռու-
սիա Կ. Պոլսոյ առջև իւր ներկայ
գիւրքը կը պահէ : Ըստ Լորտ Մոն-
թաղիի, Լորտ Տէրպիի տէրութեանց
խորհրդոյն մէջ Յունաստանն ընդու-
նել տալու ջանքն ալ ոչինչ նուազ մեր-
ժելի էր, քանզի Եւրոպական մայրա-
քաղաքաց մէջ Հելլենք իբրեւ խորհրդ-
աւ գոյ ճանչուած են ըսաւ : Ատենա-
բանը Ռուսիոյ կնքած դաշնադրու-
թեանց վրայ չկրնարով վստահիլ պա-
հանջեց որ Լորտ Պիլքոնսֆիլտ անձամբ
երթայ Ի Պէրլին : Լորտ Ֆիլքոնսֆիլտ
տեղ տուաւ թէ այս խօսքերն Անգ-
ղիոյ մէջ Թուրքիոյ հին կուսակցաց
վերջին ճիշն և մահուան կտակն էին :
Թէ Լորտ Տէրպիի Յունաստանն ի
ժողով ընդունելու առաջարկութիւնը
բոլոր Անգղիոյ մէջ ընդհանուր հա-
ւանութեամբ ընդունուած էր : Սըր
Հարքըրթ ըսաւ թէ Յունաստանի ա-
ղատութիւնն, որ քանինիկի հանձա-
րոյն սրդիւնքն էր, Անգղիոյ պատ-
մութեան պանծալի էջերէն մին է :
Եւ Լորտ Լայքնսի, Լորտ Տէրպիի և
Յունաստանի դէմ եղած յարձակում
ները մեղադրեց, որք ժողովին կար-
ծիքը չէին ներկայացներ : Ելումից
նախարարը պատասխանեց թէ այս
հարցումներն ու յարձակումները կա-
ռավարութեան վրայ անվստահու-
թիւն չեն նշանակեր, այլ ներկայ
պարագայից մէջ հասարակայն կարծ-
եաց զգացած անհանգստութենէն
առաջ կուգային : Անգղիա իւր ան-
հատական դործողութեան և որոշ
ման ազատութիւնը վերադարձելով
տէրութեանց խորհրդը պիտի մըտ-
նէ : Եթէ իւր կարծիքը փոքրամաս-
նութեան կողմէ մնայ, մեծամասնու-
թեան կարծիքն ընդունելու պարտա-
ւոր չէ : Անգղիա կը պահանջէ որ
Ռուսիոյ և Թուրքիոյ մէջ կնքեալ պայ-
մանաց ամբողջը տէրութեանց խոր-
հուրդին ներկայանայ, որ կարենայ
որոշել թէ ինչ խնդրոց վրայ պիտի
վիճարանի : Անպատահ է հիմայ հար-
ցընել թէ Անգղիա կատարեալ եղե-
լութիւնները պիտի վստահեցնէ թէ
ո'չ : Անգղիա պիտի պահանջէ միայն
որ Եւրոպիոյ և իրեն շահուց վերա-
բերեալ կէտերուն վրայ ձայն մ'ու-
նենայ : Իսկ տէրութեանց խորհրդին
մէջ Անգղիոյ ներկայացուցչին գալով,
նախարարութիւնը միաձայն հաւա-
նութեամբ պիտի անուանէ զայն :
Ուստի այս ներկայացուցչին ո'վ որ
ըլլայ, միացեալ նախարարութիւն մը
պիտի ներկայացնէ, և անոր հրահանգ-
ները պիտի ընդունին : Այս պատա-
խանատութեան սկզբունքէն դուրս
հարցումներ ընել անպատեհ է : Նա-
խարարին այս խօսքերն Անգղիացեաց
մէկ մասին ցոյց տուած չափազանց

կարծեաց արժանաւոր պատասխան
մ'է, որ գրեթեալ երևակայութիւն
ները պէտք է հանգարուցնէ :
Միւս կողմէն Ռուսիոյ մէջ ալ չա-
փազանց կարծիք կը տեսնուի տէրու-
թեանց խորհրդին առթիւ : Այս կարծ-
եաց պաշտպաններն առերեւոյթ ի-
րաւամբ կըսեն թէ պատերազմը Ռու-
սիոյ զոհողութեամբ կտառեցաւ, ուստի
չեղբներն իրաւունք չունին
այժմ Ռուսիոյ և Թուրքիոյ դաշնադ-
րութիւնը վերաքննելու, քանզի Գեր-
մանիոյ և Գաղղիոյ կնքած դաշնադ-
րութեան ոչ ոք միջամտած էր : Բայց
Եւրոպական տէրութեանց այս միջա-
մտութիւնն 1871 ին թէ իրենց թէ
Ռուսիոյ ստորագրած դաշնադրու-
թեան այն սկզբան զօրութեամբն է,
որով դաշնադրութեան մ' ստորագ-
րութիւն գնող տէրութիւն մը չկը-
նար զայն ջնջել կամ փոխել, առանց
միւս ստորագրողաց գործակցութեան
Այդ ժամ 1836 ի դաշնադրութեամբ
Եւրոպա Թուրքիոյ ամբողջութիւնն ե-
րաշխարարած էր, և Ռուսիա երաշ-
խարարեալ երկրի մը վրայ յարձակած
ըլլալով, Եւրոպա իրաւունք ունի իւր
կնքած դաշնադրութիւնն աչքէ ան-
ցունելով փոխելու և միանգամայն
Եւրոպական շահերը պաշտպանելու :
Այս շահերը խիստ ընդարձակ են, և
զանքն պաշտպանելու եղանակները
բազմաթիւ, այնպէս որ անկարելի է
այժմէն որոշ գաղափար մը յայտնել
այս մասին : Քանի մը լրագիրներ կը-
սեն թէ Եւրոպական Թուրքիա ո'չ ևս
է, թէ Թուրքիա այսուհետեւ Եւրո-
պական տէրութիւն մ'անդամ հաղիւ-
կրնայ համարուիլ, և իւրաքանչիւր
Եւրոպական տէրութեան կը մնայ իւր
շահերը պաշտպանել : Առ այժմ այս
գործը տէրութեանց խորհրդոյ մը
միջոցաւ կատարել կուգուի, բայց
եթէ այս եղանակը չյաջողի, եթէ
տէրութեանց խորհրդոյն անյաջող
ենէ, այն ժամանակ չգիտցուի թէ
ինչ կերպ գործողութիւն պիտի ըն-
դունուի, արդեօք իւրաքանչիւր իւր
բաժինն աւանդու պիտի փութայ :
Շատ մը լուրջ թերթեր անկարելի կը
համարեն զայն : Անտարի կոմսը բա-
ցորոշապէս յայտարարեց թէ Պոմեր-
ան և Հէրսէքը գրաւելու միտք չու-
նի, և կըսեն թէ Անգղիա ալ եղիպ-
տոս զօրք չպիտի դրկէ : Տէ. Մի. Նիւզ
լրագիրն Անգղիոյ և Եւրոպական տէ-
րութեանց կարծիքն այսպէս կը բա-
ցատրէ, որ ամենէն աւելի հաւանա-
կան կը թուի : Չեղբ տէրութիւնը
պարզապէս Թուրքիոյ և Ռուսիոյ վե-
րաբերեալ կէտերուն չափով միջամ-
տեն : Եթէ Թուրքիա երկիր կորսն-
ցուց, իւր յամառ դիմադրութեան
հետեւանքն է, պէտք է որ կրէ : Բայց
Եւրոպա չկրնար ճանչնլ որ Ռուսիա
և Թուրքիա միանալով Գանուրի, Կ.
Պոլսոյ ներքուցին և Ռուսիոյ ջրանց

քին մէջ ազատ նաւարկութիւնն ար-
դեւուն : Հետեւաբար ասոնք չեղբ
պիտի ըլլան : Այդէ զատ եղիպտոսի
ապագայ վիճակն ուշադրութեան պի-
տի առնուի, և տէրութեանց խոր-
հուրդն այնպիսի եղանակ մը պիտի
գտնէ, որով Եւրոպիոյ և Հնդկաստա-
նի հաղորդակցութիւնները մշտնջե-
նապէս ասպնջուին : Ելավոց ազդե-
ցութեան դէմ Հելլենական տարրին
ոյժ պիտի արուի, և կը յուսացուի
որ այս լուծման եղանակները կրնան
պատերազմին առաջնէն առնուի :
Գաղղիական Թան լրագրին Ռեդ-
ըրպուրկի լիզմակիցը կը գրէ թէ
« հաշտութեան դաշնադրին մէջ Ռուսիոյ
մասին դրուած պայմաններուն ինչ ըլ-
լալը գեռ յայտնի չէ : Կը կարծուի
թէ Պաթմա և Պոլսոյ պիտի կա-
րենան դարձեալ Թուրքիոյ մնալ, ա-
ռաջինն ազատ նաւանգլխաւ հրա-
տարակաւելոյ : Կը ծանուցանեն նաեւ
թէ Բ. Գուսն հարկադրուեալ է խոս-
տանալ որ Հայագի թրիստանէից վի-
ճակն ալ բարուքէ » Ռուս գործակա-
տարի մը հակողութեան ներքեւ : Այս
բանը Ռուսիոյ համար իւր այդ կող-
մերն ալ ազդեցութիւնը զօրացնելու
միջոց մ'է, որ երկրակալութենէն աւելի
արժէք ունի իրեն համար : Իրաւունք
ունիմ, կը յուսելու լիզմակիցը, կար-
ծելու թէ Է. Սիմաժին ալ այս մասին
մեծապէս զբաղման մէջ է : Գործը
սա է թէ, երբեք Հայ եպիսկոպոսունքը,
իզմիլեան Մատթէոս, Խորեն և Ներ-
սէս, Պոլսէն մեկնելով արդէն Օտէ-
սա հասած են : Ասոնցմէ երկուքն Էջ-
միածին կերթան կաթողիկոսին մօտ,
երրորդն ալ ճանքան կը շարունակէ
դէպ ի Բեդրասուրկ : Գեր. Ներսէս
սրբազան Կ. Պոլսոյ Հայոց Պատրիար-
քն է : »
Այս հատուածին վերջի մասին
մէջ տեսնուած խոշոր սխալն ուղղե-
լու հարկ չկայ : Մայրդ է որ Գեր.
Մատթէոս և Խորեն եպիսկոպոսունք
Էջմիածին գնացած են Վեհ. կաթո-
ղիկոսին հրաւիրանօք, բայց Ս. Պատ-
րիարքը տեղէն չարժած չէ :
Անգղիական Թայմս լրագրին Կ.
Պոլսոյ լիզմակիցն ալ հետեւեալը կը
հեռագրէ մարտ 8 թուով :
« Չեղ գիւր մը կը գրեմ լիզմա-
տարով, յարմէ բացորոշապէս պիտի
տեսնէք թէ Հայոց ողջամիտ մասը
Ռուսիոյ և Թուրքիոյ մէջ կնքուած
դաշնադրութեան իրենց հայրենեաց
վրայ ունենալիք արդեանց վրայ լիւն-
պէս կը խորհի, Հայ մը ինչ գրեւով
կըսէ թէ իւր հայրենակիցները կը
վստենան որ Ռուսիա չքաշալիքէ զՏաճ-
կաստան իւր յոռի կառավարութիւնը
շարունակելու, և այս ալ իւր օգտին
համար, որպէս զի աստիճանաբար
բոլոր Հայաստանը կընէ : »

առնելու և Պոլսից մեկ և Դա-
նուբի եղբայրն իրենց բռնած գիր-
քերն ամրացնելու համար :

Պէօյիւքաթէրէն գրուած մասնա-
ւոր նամակ մը կը ծանուցանէ թէ ե-
րեք չորս վաշտ Օսմանեան զօրք անց-
եալ շաբթու Պահլէքէօյի կողմն և
Դասապ Չայիրի ըստեւած անգը բա-
նակ դրեր են մեծամեծ թնդանօթ-
ներով , բայց շաբթի օրը մեկնել են :

Պէօյիւքաթէրէն առջև սպասող
Ռուսական ֆոնսթամպին և վէսթա
չոգենտներն անկից մեկնելով Այս-
թէֆանուս գնացին , որով Ռուսաց
Պէօյիւքաթէրէն գրաւելու գիտաւո-
րութենէ ետ կեցած ըլլալն հաս-
տատուեցաւ 'ի մեծ գեղահաւթիւն
բազմաթիւ շահագիւտաց , որք հոն
խանութներ ու տուններ վարձելով ա-
մեն տեսակ վաճառք տարեր էին :

Պէօյիւքաթէրէն մէջ զրոյց կը պը-
տար թէ երեք չորս Ռուս զօրականք
սպաննուած գաւառեր են Պէօյիւք-
աթէրէն մասերը :

Մայրաքաղաքի յաւնական թը-
րաքի լրագիրն Յունաց Պատրիարքին
հիւանդութեան երկարելուն վրայ
ցու յայտնելով կըսէ թէ ներկայ ծա-
նոր պարագայից մէջ Յունաց ազգն
ամեն ժամանակէ աւելի պէտք ունի
ժիր և փութամիտ Պատրիարքի մը ,
որ կարող ըլլայ ամեն օր Սինոդը
գումարելով թուրքիոյ Յոյն ազգու-
թեան սպառնացող վտանգին վրայ
խորհիլ և հարկ եղածը անօրինակ
« Բանի մ'օրէն անբուժեալ ժողովը
պիտի գումարի , կըսէ , 'ի Պէրլին և
Արևելեան ազգաց բազմք պիտի ու-
րաշէ , կամ մանաւանդ իւրաքանչիւ-
րին ազգութիւնն ու իրաւունքներն
հանգիստապէս պիտի հաստատէ : Արդ-
' ուր է Պատրիարքարանին պաշտօ-
նական բարձր իւր եկեղեցական ի-
րաւասութեան ներքեւ գտնուող յու-
նական գաւառաց յափշտակուելուն
դէմ » :

Ասոնք ըսելով յիշեալ թերթը
կառավարէ որ անյայտ պատրի-
արքական տեղապահ մը գրուի 'ի մի-
շև որ Պատրիարքը կատարելապէս
առողջմաղով կարող ըլլայ ազգին
և եկեղեցւոյն գործերը անօրինակ :

Ագրիանուպօլէն կը գրեն թէ
անցեալները քաղաքին մէջ Ռուս գըն-
դապետի մը սպաննութեան հետեւեա-
կը թուրք մ'ըլլալն ստուգուելով ,
յիշեալ թուրքը կախուեր է քաղա-
քին մէջ :

Պատրիարք լրագիրը կը ծանուցա-
նէ թէ Ատաբաղարի և Ղուբապէն-
կի շրջականները կատարուած չարա-
գործութեանց հետեւանները գըտ-
նելուն և ըստ օրինի պատժելու հը-
րաւան գրիւղեր է Բ. Դանիէն տեղ-
ւոյն իշխանութեանց :

Հռոմի պապական աթոռին փո-
խանորդ Մօնսինիօր Կրասթիլի կիրակի
օրը Վէհ. Սուրբանին ներկայանալով ,
լէտն թիւ պապին մէկ ինքնագիր նա-
մակը ներկայացուց , որով նոր պապն
իւր գահակալութիւնը կը ծանուցա-
նէր Ն. Կ. Վեհափառութեան :

Գոհութեամբ կը լսենք թէ կայ-
քերական կառավարութիւնը մայրա-
քաղաքիս մէջ բնակութեան մօտ
տեղեր մեղեալ թաղերն արդիւնք է :

Մայրաքաղաքի քաղաքապետու-
թեան որոշմամբ հացին գինը 10 փա-
րա իջաւ :

Մայրաքաղաքիս մէջ և շուրջը ճա-
րակեալ արջաւոց դժբաղ հիւան-
դութիւնը՝ գեղազարար Եպիփան
Երուսաղիմայ սեպհական ագարակին
արջաւոց մէջ ալ ճարակելով , 40 էն
աւելի արջաւոց կորուստ եղեր , և
վանքը՝ որ արդէն խիստ անձուկ վի-
ճակի մէջ կը գտնուի , այս պատճա-
ռաւ ալ 100 հազար զրէն աւելի վը-
նաս լսեր է :

Զկայ արկած մը , գեղազար-
թիւն մը , յորմէ մեր ազգը մեծ բա-
ժին մը չունենայ :

Կը յիշեն ընթերցողք թէ անց-
եալները երուսաղէմայ Ամին. Տ. Էսա-
յի Ս. Պատրիարք հօր մէկ գրութե-
նէն իմանալով Պատրիարքարանը
թէ ժառանգաւորաց վարժարանը
փակման վիճակի հասած է , Երուսա-
ղէմայ Պատր. Գեր. փոխանորդ հօր
յանձնեց շրջաբերական մը՝ յձեռն-
հաս ազգայնոց դիմելու և նպաստ
հանդանակելու համար :

Արդեօք ինչ վիճակի մէջ է այս
հանդանակութիւնը : Փոռն

Կէտիկ փաշայի բնակիչներէն Ղա-
ղանճեան մականուանեալ ազգայնոյ
մը կինը յիմարացած ըլլալով՝ գացեր
մահմետական կրօնքն ընդունելու
կամք յայտնել , և ստիկանութեան
կողմանէ վար գրուել է : Պատրիար-
քարանը ընելով զայս՝ Գարու — քէ-
հասի էֆէնդիին յանձնարարել է , որ
երթայ այդ յիմար կինն առնու
տիկանութեան դռնէն :

Բերայի եկեղեցւոյն հանած փո-
խանիչերն այս օրերու հաւաքելու կամ
եւ առնու առթիւ խել մ'անաեղու-
թիւններ պատահած ըլլալուն վրայ
գանգաւանք կը լսուին :

Յիշեալ եկեղեցւոյն թաղ . խոր-
հուրդն՝ եւ բերուած փոխանիչերուն
փոխարէնը հարիւրին 40 զեղչով վճա-
րել կուզէ ելլել , որով բնականաբար
եկեղեցւոյն բալն ազմկարից ազա-
ղաներու հայհոյութեանց և ուրիշ
անկարգութեանց տեսարան դար-
ձած է քանի օրէ 'ի վեր :

Կը յուսանք որ Պատրիարքարանն
այս անտեղութեան առաջին տեսնե-
լու համար քոնէ կազդարարէ յիշ-
եալ Թաղ . խորհրդին թէ իւր բըռ-
նած ընթացից շարժառիթն որչափ
և եկեղեցւոյ շահն եղած ըլլայ , ի-
րաւանց և արդարութեան հակառակ
է , որովհետեւ այն փոխանիչերն ե-
կեղեցւոյն ստորագրութիւնը կամ պօ-
նօն են , իրեն գրած շրջաբերական
հանուած , որոց յարգը մի միայն ամ-
բողջապէս վճարուելու փառհալ թեան
վրայ կայացած է : Ասոր վրայ հար-
իւրին 40 զեղչ պահանջեն՝ եկեղեց-
ւոյն կամ թաղին պատիւն անարգա-
նաց և հայհոյութեան մասնակ է :

Վերջապէս ազգին նախատինք
բերող ամբիթալի և դայիմակալական
չարաշահութիւն մ'է , որուն առաջին
առնուլը վարչութեան պարտաւա-
նութիւնն է :

Ցաւելով կիմանանք թէ դադար-
եալ Մամուր լրագրայ խմբագիր-անօ-
րէն Այվաղեան Գեօրգ. Էֆէնդիին լը-
ծակից տիկին Ռոզա՝ յետ երկարա-
տեւ հիւանդութեան տոյ գիշեր իւր
մահկանացուն կնքել է 'ի ծաղիկ հա-
սակի 25 ամաց՝ յանմիտաբ սուգ-
տրտմութեան իւր ամուսնոյն և ազ-
գականաց :

Յուդարկաւորութիւնն այսօր պի-
տի կատարի ժամ 8 ին Բերա Գալ-
եօնճու ճառատէ , Ֆէշիլիքի վաղոց
թիւ 13 տունք , ուսկից հանգուցե-
լոյն մարմինը Բերայի Ս. Երրորդու-
թիւն եկեղեցին տարուելով , անկէց
ալ Ֆէշիլիք պիտի փոխադրուի :

Սոյն դառն կորուստն համար
մեր ցաւակցութիւնը կը յայտնենք
մեր վաղեմի պաշտօնակցին :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍԶԱՄԱՐԱՆԻ ԴԱՐՈՒՄԻ	
13 մարտ երկուշաբթի իրիկուն	9. 7
14 մարտ երեքշաբթի առաւօտ	
Բացուեցաւ	9. 9
ժամ 6 ին	8.38
Բաւական երկաթուղի	Փր. 28
Թղթադրամ	Լր. 260

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԱՅՔԱՅ

Կ. Պոլս 13 Մարտ	
Աստիճէ Եփէնդիլի Բաժ. Անգլ. Լր.	2.30
Փոխանակութեան	2.40
Կ. Պոլսի Պատրիարք	3. 5
Քրիստի Եփէնդիլի	2.45
Քրիստի Օսթրո-թիւրք	—
Փոխ. 1863	Ֆր. 40
• 1865	41
• 1869	38
• 1872	13 75
• 1873	36 50
Թրամուս	Օսմ. Լր. 1

ԸՆԹԱՅՔ ԳՐԱՄԱՅ

13 Մարտ	
Անգլ. Լր.	409 2
Նարոյնի սակ	86 31
Իմիւրիալ Ռուս	88 32
Գըրմիկ	50 33
Հինգ ֆրանք	—
Հինգ նոց	120 20
Պլինձ	170

... Խմբագիր .
Տրապիզոնի Առաջնորդ Գեր. Տ Մատ-
թէոս Ծ. վարդապետ Նազարեանց՝ Թրի-
փօլի , Էլէյու և Ալեքսանդրէից Մեծ-
ազգայններէն 'ի նպատակ Ազգ. Հիւան-
դանոցի պատասխանող տաննետօթը պարկ
(հազար հինգ հարիւր քսան քալ) լուրիս
հանդանակած ըլլալով , Հաղաթարծութիւ-
նըս ընդունեց զայն :

Նորին Գերապատուութեան սոյն աղ-
քատարական արարքը արդարեւ դիմու-
թեան և շնորհակալեաց արժանի է , որ
այսպիսի դրամական անձեղութեան և պա-
րենեաց սղութեան միջոցին միտք բերե-
լով Ազգ. Հիւանդանոցի խղճալիներն ,
փութաց անոնց պարէնի զլխաւոր պէտքն
հայթայթել : Եթէ Նորին Գերապատուու-
թեան այս գովելի և առաքինական ա-
րարքին բոլոր Գեր. Առաջնորդ հաճին
հետեւի , անտարակուսելի է թէ իրենց
ձեռնարկը արդիւնաւոր վախճան ունե-
նալով , ինչեւ յարկի պատասխանող վի-
ճակն ալ աւելի բարեւոք կերպարանք կառ-
նու :

Այս առթիւ հոգաբարձութիւնս կը
փութայ իւր խորին շնորհակալեաց և խղ-
ճալի պատասխանող երախտագիտութեան
հաւաստիքն հրապարակաւ մատուցանել
թէ Գեր. Նազարեանց Մատթէոս Ս.
հօր , և թէ Մեծ. Նախարար ազգայնոց
1878 մարտ 9 Մամբ յարգանք
Գրասեն. Հիւ. Ի դիմաց Հոգ. Հիւանդ.
Մեծ Նոր խան Անիէֆէի Մ. Մանուկեան
թիւ 49

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻՔ
ԱՐԲՇՈՒՄԹԻՆ

Երուսաղեան քաղաքապետութեան օր
քան զօր զարգացման առջև տխուր հա-
կապատիւր մը կընծայէ արքայութեան
օր քան զօր ճարակումն , իրեն տեսակ
մը մակընթացութիւն , ուր տակաւ առ-
տակաւ կը սուղին իրեւաւոր մարդոց բա-
նականութիւնը , արժանապատուութիւնը ,
առողջութիւնը , հարստութիւնն և միշտ
իսկ անոնց սերնդոց ապագայն : Այս առ-
խուր թափօրին զրօշակիւններն են Անգ-
ղիա և Ամերիկա :

Բարոյագէտները , քաղաքագէտներն
ու բժիշկներն 'ի դուր կաշխատին ազգու-
ղարման մը գտնել այս ապականարար և
ապշեցուցիչ միջոցեան : Դեղեր պակաս
չեն արդարեւ , բայց դժբաղդարար ազ-
գեցութիւնն չուին :

Ամերիկայի մէջ ժողովարութեան ըն-
կերութիւնները բացարձակապէս ապար-
դիւն ենելով , սակէց 4-5 տարի առաջ
տիկնանց ընկերութիւններ կազմուեցան
մեծ քաղաքաց շատերուն մէջ , 'ի բառ
տեսալ Նիւ-Եորք , որ արքայութեան ա-
նախիկ ամրոցն է : Քաղաքիս կանայք ,
բազմամարդ քաղաքաց մէջ խումբ կազ-
մելով , գինեւանց առջև կերթային ժող-
կապութեան երգեր կերպէին , և յետոյ

յանդիմանութիւններ կուղղէին ըմպողաց և
դիւնեպանաց , Բայց օր առ մը չկրցին ձեռք
բերել՝ բաց անարգանք , և երբեմն ալ
քանի մ'օր բանտարկեցան իրեն վրայով
հասարակաց խաղաղութեան : Վերջապէս
այս փորձն ալ ծաղր ու ծանակ ըլլալով
վերջացաւ :

Անգղիոյ մէջ արքայութիւնն այն առ-
տիճան յառաջդիմութիւն բրած է վեր-
ջին տարիներս , որ զսպողական օրէնք-
ներն անբաւական եղան , և խառնապարու-
թիւնն ու հասարակաց գիւղութիւնը պար-
տաւորեցան բազմաթիւ հիւանդանոցներ
հաստատել արքայաներուն համար :

Այս պատասխաններն սքանչելի կեր-
պիւ կազմաւորեալ են ամեն կարգի ան-
ձանց համար , և բնիկ հանրապետ այն հիւ-
ւանդները կընդունին , որք կամաւ յանձն
կանուեն դարմանուիլ :

Խաչուէն ու թէյն առատապէս կը
տրուին ամեն ճաշի վերջը , բայց սկզբից
ըմպելիք երբէք : Սակայն կը պատահին
երբեմն այնպիսի հիւանդներ , որոց մե-
կէն 'ի մէկ ուղեկց ըմպելիք կարիւր վը-
տանդաւոր ըլլալով , կերակուրներէն ու
մանց մէջ քիչ մը շաքարով կը խառնեն :

Բժիշկին մէկը մտածելով արքայութեան
զրուեցնելու համար ամեն կերակրոց մէջ
դիւրի ողիք խառնել , այս դեպն ալ յու-
սացուածին հակառակ արդիւնք տալով ,
ժամանակ մը դործածուելէ ետեւ մէկ
կողմ թողուեցաւ : Ամերիկայի մէջ քանի
մ'անուղղայ արքայութեան բանտարկուելով՝
Բէթթի կազմուել է դայն տեսակ մը
ողեկց ըմպելի շինելով խմեր էին : Մի-
թէ Անգղիոյ մէջ ալ եկէր խմողներ չկա՞ն :

Անգղիայի կանայք , կըսէ Գաղղիա-
կան Քոնսթիլի Քոնսթիլի լրագիրը , փոխա-
նակ ամերիկացի կանանց պէս իրենց այ-
րերուն արքայութեանը վէժ մտքաւորել ,
աւելի պարզ կը գտնեն ընկերակցիլ ա-
նոնց : Բարոյագէտը կը դարմանան Անգ-
ղիոյ մէջ գտնուած արքայութեան կանանց ու-
րիւ եւրոպական երկիրներու մէջ գտնուա-
ծէն անհամեմատ աւելի շատ ըլլալուն վը-
րայ : Անհար է Անգղիոյ մէջ մարդապատ-
քաղաք մը պարտիլ , և փողոցներուն մէջ
տեսնուած արքայութեան կանանց բազմութեան
վրայ չընտրանալ : Բիւսիլը Հոսուդ կոչ-
ուած հասարակաց տուններն համապազ-
լի են արքեպիսկոպոսիտի , որք ամենա-
տխուր տեսարան մը կընծայեն անցողիկ
Այս պատճառաւ որ Անգղիոյ մէջ լսե-
լազար կանանց թիւն ուրիշ ամեն եր-
կիրներէ աւելի է :

Բազմաթիւ երեւելի անձինք , իրաւամբ
յուզուելով այս վիճակին վրայ , անցեալ-
եալները Լոնտոնի քաղաքապետութեան
պալատը ժողով մ'ըրին , որպէս զի դը-
ժաւոր դասու կանանց մէջ արքայու-
թեան յառաջդիմութիւնն արգիլելու մի-
ջոցներ խորհին : Վերջապէս ժողովն ու-
րոյց յատուկ դարմանոց մը հիմնել ա-
սոնց համար :

1876ին , մինակ Ուէլսթմիտիլ լրագր-
տին մէջ 5588 կանայք բանտարկեցան
հրապարակաւ արքեպիսկոպոսիտի ըրած ըլ-
լալուն պատճառաւ : 1875ին , բանտարկ-
եալ կանանց թիւը 4880 էր : Իսկ նա-
խընթաց տարիներն 5000-ին աւելի չլր :
Ասկէց կընայ հասկցուիլ այս ողբալի մո-
լութեան յառաջդիմութիւնը : Վերջապէ-
եալ թիւերն ստուգիւ ռարտափոխի են ,
մանաւանդ երբոր նկատուի որ Ուէլսթ-
միտիլի թիւը Լոնտոնի ամենէն բազ-
մամարդ թիւը չէ :

Բանտարկեալ կանանց ամենն ալ ըն-
կերութեան ստորին դասերուն կը վերա-
բերէին , 14 տարեկանէն մինչև 70 տա-
րեկան : Շատերն արդէն ուրիշ անգամ
ալ բանտարկութիւն կըրած էին արքեպի-
սկոպոսիտի համար , ոմանք մինչև հարիւր ան-
գամ :

Այս կրկնակողմութիւններէն կը տես-
նուի որ պատժական միջոցները կարող
չեն արքայութեան յառաջդիմութիւնն
արգելու : Բայց վերջիվերջ նոր դարմա-
նոցին մէջ տրուելիք ողջապահական և բա-
րոյական դարմաններն առաւել ազգե-
ցութիւն պիտի ունենան : Եթէ Ամերի-
կայի մէջ նմանօրինակ հաստատութեանց
արդիւնքին նայուի , պէտք չէ մեծ յոյս
մ'առնենալ : Բայց պէտք է միշտ փորձել
նախ՝ վստի զի կընայ թերեւս յաջողիլ , և
երկրորդ՝ վստի զի մարդասիրաց միտքը
կ'ընդունի :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՍԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԴԵՄՈՔՐԱՏԻԿԱՆ ԴՐՈՒՄԻ ՄԱՍԻՆ